

ՎԻԿՏՈՐ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ

ԱՍՏՎԱԾԸՆԿԱԼԻ ՎԱՆՔԸ

Ապարանի շրջանում, Հարթավան գյուղից 2 կմ հեռավորությամբ Քասաղի կիրճի աջակողմյան բարձր բլրի վրա, վեհորեն կանգնած է Աստվածընկալի վանքը: Վանքը գրեթե ձուլվել է բնությանը, հարազատ, համահնչուն է նրան:

Կաթողիկե եկեղեցին և գավիթը 1240—1250-ական թվականներին կառուցել են Վաչուտյան Քուրդ իշխանն ու նրա կինը՝ Խորիշահը, որպես ուսումնական կենտրոն, և նրա պահպանության համար առատ նվերներ են տվել: Կաթողիկե եկեղեցու խորանի աջ կողմի 1244 թվականի շինարարական արձանագրությամբ Քուրդ իշխանը հայտնում է.

«Ծնորհօք և ողորմութե[ա]մբն Ա[ստուծո]յ ես Քուրդ իշխանաց իշխան, որդի մեծին Վաչէի և կենակից իմ Խորիշահ, դուստր Մարծպանա շինեցաք զսուրբ կաթուղիկէս յիշատակ հոգոց մերոց. ամենայն զարդուք զարդարեցաք. տուաք ընծայ ամեր գնած այգին ի Փարպի, Ա խուպան Աւշական, Ա այգի ի Կարբի, Ա շինական, Դ ողջատուն: ՈՂԳ թուիս»[1]:

Կաթողիկե եկեղեցին չափավոր մեծության է: Թորոս Թորամանյանը նկատել է, որ այն կառուցված է «մոտավորապես Անիի Լուսավորիչ եկեղեցվո ձևով և չափով»[2]: Գմբեթը հենված է եղել որմնասյուների վրա: Այժմ փլված է:

Կաթողիկե եկեղեցու կառուցումն ավարտելուց հետո նրան անմիջապես կից արևմուտքից կառուցվել է գավիթը: Այն շատ ավելի ընդարձակ է, քառասյուն, գմբեթը զարդարված է ' ստալակտիտներով և իր տիպի մեջ լավագույններից է: Գավթի ներքին տեսքը զուսպ է, անմիջական: Սյուների խոյակները խաչազարդ են: Արևելյան կողմի երկու որմնասյուների վրա քանդակված են դուրս ցցված, գեղաքանդակ խաչեր:

Գավթի հատակը ծածկված է տապանաքարերով: Բացի մեկից, որի վրա անընթեռնելի տառահետքեր են նշմարվում, մյուսները արձանագրված չեն: Դրան հակառակ տապանաքարերի մեծ մասի վրա ուրվագծված են մարդկանց ուրվապատկերներ: Այդ ձևը ընդհանրապես հատուկ է Ապարանի շրջանի միջնադարյան գերեզմանատներին (Մռավյան, Հարթավան, Զովունի, Ապարան, Նորաշեն, Երնջատափ, Զորագյուխ, Քուչակ)[3]: Հարավ-արևելյան սյան հյուսիսային կողմում, խարսխին կից, կա մի երկար ու նեղ տապանաքար, որի

---

[1] Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ. աշխատասիրութեամբ Յովհ. եպ. Շահխաթունեանցի, հ. 2. Էջմիածին, 1842, էջ 170:

[2] Թ. Թորամանյան. Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 2, Երևան, 1948, էջ 202:

[3] Այս փաստի վրա ուշադրություն է դարձրել Թ. Թորամանյանը: Նյութեր..., էջ 203:

Սասունցի Դեղեղիս տեսարան՝ Գոլոթ-լեռան-արևմտյան կողմից

Սասունցի Դեղեղիս գեղեցիկ տարածությունը՝ Գոլոթ-լեռան արևմտյան կողմից. Լուսանկարը՝ Հ. Գրիգորյանի



Ատվածընկալ. Գավթի գլխավոր մուտքը (շքամուտք)



Ատվածքնկալ. Եկեղեցու հարավ-արևմտյան կողմում կանգնեցված զույգ խաչքարերը

վրայի մարդու պատկերը ավելի նախնական ուրվագիծ ունի:

Արտաքուստ թե՛ եկեղեցին, թե՛ գավիթը շատ պարզ ու անպաճույճ են: Բայց գավթի շքամուտքը չափազանց շքեղ է: Կառույցների տանիքները խաչաձև են: Գավիթը կառուցել է «Յոհանէս» ճարտարապետը: Նրա ստորագրությունը մնում է գավթի հարավ-արևելյան սյան վրա: Ամենայն հավանականությամբ կաթողիկե եկեղեցին ևս «Յոհանէսն» է կառուցել:

Մինչև Աստվածընկալի կառուցելը բլրի վրա գոյություն է ունեցել եկեղեցական հասալիր: Կաթողիկե եկեղեցու հարավային պատն իր մեջ է առել ավելի փոքր եկեղեցու կամ մատուռի հյուսիսային պատը: Փոքր եկեղեցու ծածկը քանդված է, միայն պատերն են կանգուն: Շինության ոճը թույլ է տալիս ասել, որ այն 5-րդ դարի կառույց է[4]: Եկեղեցու որմնասյուները, դրանց խոյակներն ու խարիսխները հար և նման են Տեկորի նույնատիպ կառույցներին: Նմանությունը բացարձակ է նաև Զովունիի գերեզմանատան մեջ կառուցված 5-րդ դարի մատուռի որմնասյուների, խոյակ-խարիսխների հետ[5]:

Մատուռը ունեցել է երկու դուռ՝ հյուսիսային և հարավային կողմերից: Մատուռին կցված են մի փոքրիկ խորան և մի սենյակ: Փոքր խորանը խորանակից է բուն մատուռին, իսկ սենյակը՝ հարավ-արևմտյան անկյունում դռնով է հաղորդակցվում մատուռի հետ: Թ. Թորամանյանը, հանգամանորեն ուսումնասիրելով մատուռը և իր հավելվածները, կարծիք է հայտնել, որ այն կարող է վկայարան եղած լինել[6]:

Մեծ ճարտարապետի կասկածը անհիմն չէ: Դրա լավագույն վկայությունը Հովհաննես Շահխաթունյանի գրի առած ավանդությունն է: Ավանդության համաձայն «Ի կառուցանել զայս տաճար (Կաթողիկե եկեղեցի—Վ. Պ.) ամփոփեցին ի հիման սեղանոյն սրբոյ զկող սրբոյն Յակոբայ առաքելոյ...»[7]: Հավանաբար հին եկեղեցին, որ ավելի ուշ շրջանի արձանագրության մեջ սուրբ Աստվածածին է կոչվում, հնում եղել է ս. Հակոբի վկայարան, և կաթողիկե եկեղեցին կառուցելու ժամանակ նրա մասունքները ամփոփվել են «ի հիման սեղանոյն սրբոյ»: Նույն ավանդությունից իմացվում է, որ Աստվածընկալն իր անունն ստացել է հայտնի քանդակազարդ խաչից, որի օրինակով խաչքար է պատրաստվել:

Աստվածընկալում միաբանություն հաստատվել է կաթողիկե եկեղեցին կառուցելուց շուրջ քառորդ դար առաջ: 1207 թվականին վերանորոգվել է փոքր եկեղեցին և այդտեղ միաբանություն հաստատվել: Այդ է վկայում եկեղեցու հարավային պատի վրա փորագրված արձանագրությունը.

«Ի ՈԾԶ թվիս նորոգեցաւ Ա[ստուա]ծածինս և հաստ[ատ]եցաք առաջնորդ Ք[րիստոսա]ս[ի]ր ուխտիս Կ[է]ր Գրիգոր, Եղազար, Վարդա[ն], Յոհան[էս], Յար[ութիւն], Ծերթա, Ա[ստուա]ծատ[ուր], Ըստակ[էս], Սարգ[իս], Փա[նոս] և այլ միաբանցս, որ հաստ[ատ]եցա[ն]ք զուխտ միաբանութե[ան] հոգոց մե[ր]ոց...»[8]:

Աստվածընկալի վանքը միջնադարյան Հայաստանի ճարտարապետության զարդերից մեկն է, մշակութային, կրթական օջախ:

Հրապարակված արձանագրություններ Աստվածընկալից:

1. Կաթողիկե եկեղեցու խորանի հյուսիսային որմի դռան բարավորին, 13-րդ դար.

ԵՍ
ԷԼՊԷԿՍ ՀԱՐՊԻ
ՈՐԴԻ ԶԽՈՐԱՆՍ ՇԻՆԵՑԻՔ
Մ[ԵՐ] ՀԱԼԱԼ ԱՐԴԵԱՆՑ ՍՊԱՍԱՒ
ՈՐՔ ՍՈՐԱՑ :Գ: ԱՒՐ ԺԱՄ ՀԱՍՏԱՏ
ԵՑԻՆ: ՈՎ ԽԱԲՓԱՆԷ ԴԱՏԻ ՅԱ[ՍՏՈՒ-
ԾՈ]Յ:

2. Գավթի հարավ-արևելյան սյան վրա (խիստ մաշված և հողմնահարված).

Ա[ՍՏՈՒԱ]Ծ.....
[ՊԱ]ՐՈՆ Ք[Ր]ԴԻՆ:

Պարոն ՔՈՒՐԴԸ ամենայն հավանականությամբ Քուրդ Վաչուտյանն է:

3. Գավթի հարավ-արևելյան սյան վրա, բարձրից.

ԶՅՈՀԱՆԷՍ ՅԱՂԱ ԳՍ ՅԻՇԵՑԷՔ....

Արձանագրության հրատարակիչ Թորոս Թորամանյանը կարդացել է. «Յոհանէս յիշեցէք»:

---

[4] Նույնը:

[5] Ասենք, որ Զովունի գյուղը Քասաղի հունով չորս կիլոմետր է հեռու Աստվածընկալից: Եվ զարմանալի չէ, որ Զովունին կառուցապատող Գնթունի շինարար իշխանները անպատճառ եկեղեցաշինության համար կօգտագործեին Աստվածընկալի բլրի հարմար դիրքը՝ սարալանջ ճանապարհը, աջ կողմում՝ գահավեժ լեռնալանջերը, ձախում՝ ձորը, որտեղով հոսում է Քասաղ գետը:

[6] Թ. Թորամանյան. Նյութեր..., էջ 203:

[7] Ստորագրութիւն..., էջ 169—170:

[8] Հովհ. եպիսկ. Շահխաթունյանը (Ստորագրութիւն..., էջ 171) արձանագրության այս մասն է միայն բացթողումներով արտագրել: